



ԾՐԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ  
**ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ**

Հիմնուած 1910-ին

Վերաբնակուած եւ վաւերացուած Հայ Կ. Խաչի

16-րդ Ընդհ. Պատգամ. Ժողովէն



Պ Ո Ս Տ Ո Ն

1936



614.885  
ծ - 89

# ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ՀԱՅ Կ. ԽԱԶԻ

Հիմնուած՝ 1910-ին

### ՆՊԱՏԱԿ

1.— Հայ Կ. Խաչը հայ ազգային կազմակերպութիւն մըն է, որ կը ձգտի պահպանել հայ ժողովուրդի Փիղիքական եւ ազգային դոյութիւնը մասնաւորապէս օտար դաշութներու մէջ:

2.— Հայ Կ. Խաչը կ'ունենայ իր մասնաճիւղերը Ամերիկայի եւ արտասահմանի բոլոր հայաբնակ վայրերուն մէջ:

Բոլոր երկիրներու Հայ Կ. Խաչերը մաս կազմելով ընդհանուր Հայ Կ. Խաչին, կ'ընդունին անոր նպատակը եւ հիմնական սկզբունքները:

### ԱՆՈՒՆ

Հայ Կ. Խաչը Ամերիկայի մէջ վաւերացուած է The Armenian Relief Corps, Inc. անունով: Ուրիշ երկիրներու մէջ Հայ Կ. Խաչը վաւերացուած է տարբեր անուններով — ինչպէս, Հայ Կապոյտ Խաչ, Հայ Օգնութեան Խաչ, Հայ Գթութեան Խաչ, Հայ Կանանց Միութիւն եւ այլն:

### ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԸ

3.— Հայ Կ. Խաչի գործունէութեան ասպարէզն է.

Ա.— Պատերազմի, համաճարակներու եւ աղէտներու ժամանակ օգնել Հայ բանակներուն եւ Հայ ժողովուրդին, ամէն տեղ, դրամով, հագուստով, մթերքներով, բժշկական եւ առողջապահական այլեւայլ միջոցներով:

55152 29799

A 16462



Բ. — Օգնել վիրաւոր զինուորներուն, սպաննը-  
ւածներու ընտանիքներուն, աքսորականներուն,  
բանտարկեալներուն, վեթերաններուն, զօրական-  
ներուն եւ սատարել անոնց զաւակներու դաստիար-  
ակութեան :

Գ. — Պատրաստել հիւանդապահներ, շրջուն  
դարմանատուներ, դեղագործներ, ինչպէս նաեւ  
հրատարակել առողջապահական գրքոյկներ եւ տա-  
րածել դանոնք :

Դ. — Հնարաւոր միջոցներով, պայքարիլ հայ  
մայրերու եւ նորածին մանուկներու մահացութեան  
դէմ :

Ե. — Գաղթավայրերու մէջ, ըստ կարելւոյն,  
պահել որբանոց-վարժարաններ, որդեգիր ուսա-  
նող-ուսանողուհիներ, (նախապատուութիւն տալով  
Հայ Դատին ծառայած վեթերաններու զաւակնե-  
րուն), օժանդակել կրթական հաստատութեանց, ո-  
րոնք կը ձգտին հայութիւնը հեռու պահել օտարա-  
ցումէ :

Զ. — Հաւաքել տարագրութեան հետեւանքով  
Մերձաւոր Արեւելքի բոլոր անկիւնները լքուած եւ  
կորսուած ընտանիքները, որբ-որբուհիները եւ դա-  
նոնք տեղաւորել հայաբնակ շրջաններու մէջ կամ  
զրկել Հայաստան :

Է. — Կազմակերպել նորահաս սերունդը ամէն  
տեղ եւ հող տանիլ անոր ազգային դաստիարակու-  
թեան :

Ը. — Հայաստանի մէջ, ըստ կարելւոյն, օժան-  
դակել հայ ժողովուրդի շինարարութեան, բարդա-  
ւածման եւ բարօրութեան ճիգերուն :

Թ. — Հայ Կ. Խաչը յարաբերութեան մէջ պիտի  
մտնէ եւ սերտ կապեր հաստատէ հայ լեզուի, մշա-

կոյթի, կրթութեան համար աշխատող, բայց ցըր-  
ուած եւ իրարմէ անջատ ու տարրեր անուններով  
կազմակերպութիւններու, կուսակցութիւններու,  
միութիւններու հետ, եւ պիտի դտնէ գործնական  
միջոցներ՝ մշակութային եւ կրթական աշխատանք-  
ներու համախմբման եւ ընդհանուր ուղղութեամբ  
ղեկավարութիւն ստեղծելու համար:

Ժ.— Հետամուտ պիտի ըլլայ իր շուրջ հաւաքե-  
լու հասարակական այն տարրերը, որոնք նախանձա-  
խնդիր են հայ կրթութեան, լեզուի եւ մշակոյթի  
պահպանման. պիտի ջանայ կազմակերպել այդ  
տարրերը, անոնց տալով նախաձեռնութիւն՝ աշխա-  
տելու եւ գործելու իր որդեգրած ուղիով:

### ՄԻՋՈՑՆԵՐ

Ա.— Հ. Կ. Խաչը իր նպատակին գործադրու-  
թեանը համար՝ հասոյթի հետեւեալ աղբիւրները  
պիտի ունենայ.

Ա.— Մուտքի դրամ,

Բ.— Անդամավճարներ,

Գ.— Անհատական կտակներ եւ ամէն կարգի  
նուէրներ,

Դ.— Հանգանակութիւններ, վիճակահանու-  
թիւններ, պաղարներ, հանդէսներ, ներկայացում-  
ներ եւայլն:

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

5.— 18 տարեկանէն վեր ամէն հայ, առանց  
սեռի եւ կրօնի խտրութեան, կրնայ անդամակցիլ  
Հայ Կ. Խաչին, երբ կ'ընդունի անոր նպատակը եւ  
կ'ենթարկուի կանոնադրին:

ԾԱՆՕԹ.— Անչափահաս անդամները, 18 տա-  
րեկանէն վար, կրնան կազմակերպուիլ Հայ Կ. Խաչի

հովանիին տակ եւ կրնան ունենալ իրենց Ծրագիր-  
կանոնագիրը :

### ԳՈՐԾՕՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐ

6.— Հայ Կ. Խաչի անդամները կը բաժնուին  
երկու կարգի.— դործօն եւ օժանդակ :

Ա.— Գործօն կը կոչուին անոնք, որ մուտքի  
նուէր տալէ դատ, կը վճարեն կաղմակերպութեան  
սահմանած տարեկան տուրքը և կանոնաւոր կերպով  
կը մասնակցին անոր աշխատանքներուն : Գործօն  
անդամները կը վայելեն ընտրելու եւ ընտրուելու  
իրաւունք :

ԾԱՆՕԹ.— Գործօն անդամները կ'ունենան ի-  
րենց յատուկ անդամատետրը, որ կը դրկէ վերին  
մարմինը մասնահիւղի միջոցով :

Բ.— Օժանդակ կը կոչուին անոնք, որ դործօն  
մասնակցութիւն չեն ունենար կաղմակերպութեան  
աշխատանքներուն, բայց կ'աջակցին անոր նիւթա-  
պէս՝ տարեկան մնայուն նուէրով մը : (Ամերիկայի  
մէջ տարեկան առնուազն 2 տոլարով) :

Օժանդակ անդամները առանց ձայնի իրաւուն-  
քի կրնան ներկայ դառնուիլ Հայ Կ. Խաչի այն ժողով-  
ներուն, ուր նիւթական եւ բարոյական հաշուետը-  
ւութիւն կը կատարուի :

### ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ ԵՒ ՏՈՒՐՔ

7.— Հայ Կ. Խաչի մուտքի նուէրն է Ամերիկայի  
մէջ առնուազն մէկ տոլար :

8.— Հայ Կ. Խաչի տարեկան տուրքն է Ամերի-  
կայի համար տարեկան 2 տոլար կամ եռամսեայ 50  
սէնթ :

ԾԱՆՕԹ.— Ամերիկայէն դուրս Հ. Կ. Խաչի  
մուտքի նուէրը եւ տարեկան տուրքի սակը կ'որոշ-

ուի իւրաքանչիւր երկրի Հ. Կ. Խաչի Ներքին Կանոնագրի համաձայն :

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

9.— Նոր անդամի մը թեկնածութիւնը կը դրուի Հայ Կ. Խաչի մասնաճիւղի մը ժողովին՝ իր բերանացի կամ գրաւոր դիմումով եւ առնուազն երկու դործօն անդամներու յանձնարարութեամբ : Ընտրութիւնը կ'որոշէ մասնաճիւղի անդամական ժողովը գաղտնի քուէարկութեամբ եւ մեծամասնութեան հաւանութեամբ :

10.— Նոր անդամ մը երբ կը սկսի մասնակցիլ մասնաճիւղի ժողովներուն, բոլոր ընկերուհիներուն երկայութեան պարտաւոր է ընել Հայ Կ. Խաչի ուխտը, որ հետեւեալն է.—

Կ'ուխտեմ հաւատարիմ մնալ Հ. Կ. Խաչին, ջանալ իրագործել անոր հետապնդած նպատակները եւ յարգել Ծրագիր-Կանոնագրի բոլոր տրամադրութիւնները :

11.— Ամէն անդամ պէտք է մասնակցի իր բնակած վայրի մասնաճիւղին : Բացառիկ պարագաներու տակ եւ բանաւոր պատճառներով եթէ մէկը ուզէ պատկանիլ մօտակայ ուրիշ մասնաճիւղի մը, պէտք է ստանայ վերին մարմնի հաւանութիւնը :

12.— Տեղափոխութեան պարագային՝ երբ անդամ մը ուզէ մասնակցիլ իր նոր վայրի մասնաճիւղին, պարտաւոր է ներկայացնել պատշաճ յանձնարարական նախկին մասնաճիւղէն :

ԾԱՆՕԹ.— Երբ մասնաճիւղ մը մերժէ յանձնարարել իր մէկ անդամը ուրիշ մասնաճիւղի մը, պարտաւոր է ներկայացնել իր պատճառները վերին մարմնին :

ԿԱԶՄ-ՄԱՍՆԱՃԻԻՂ

13.— Հինգ կամ աւելի անձեր կրնան կազմել  
Հայ Կ. Խաչի մասնաճիւղ մը, որ կը վաւերացուի  
Հայ Կ. Խաչի վերին Մարմնէն: (Սմերիկայի մէջ  
Հ. Կ. Խաչի Կեդր. Վարչութենէն, արտասահմանի  
մէջ Շրջ. Վարչութիւններէն):

ԾԱՆՕԹ.— Միեւնոյն քաղաքին մէջ միայն մէկ  
մասնաճիւղ կրնայ գոյութիւն ունենալ: Բացառիկ  
պարագաներու տակ երկրորդ մասնաճիւղ մը կազ-  
մելու իրաւասութիւնը կը վերաբերի միմիայն վե-  
րին մարմիններուն:

ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

14.— Մասնաճիւղի պարտականութիւններն  
են.—

Ա.— Գործադրել իր վերին մարմիններուն բո-  
լոր հրահանգները:

Բ.— Աշխատիլ ժողովրդականացնել Հ. Կ. Խաչի  
նպատակները իր վայրին մէջ:

Գ.— Բարձրացնել եւ զարգացնել անդամներու  
եւ իր վայրին մէջ դոնուող հայ կիներու աղգային  
գիտակցութիւնը:

Դ.— Ստեղծել նիւթական հասոյթի աղբիւրներ  
եւ աւելցնել անդամներու թիւը:

Ե.— Չեռնարկներէն անմիջապէս յետոյ մասնա-  
ճիւղը պարտաւոր է դանձր հաւաքուած գումարը  
ղրկել վերին մարմնին:

ԾԱՆՕԹ.— Մասնաճիւղը իր գանձին մէջ կը  
պահէ միայն հարիւրին տասը տոկոսը՝ տեղական  
ծախֆերու համար:

15.— Մասնաճիւղը պարտաւոր է նիւթական  
պատասխանատուութիւն հրաւիրող կամ Պատգ.



Ժողովի որոշումով չնախատեսուած ձեռնարկներու համար ստանալ վերին մարմնի հաւանութիւնը :

16.— Պատգամաւորական ժողովէն մէկ ամիս առաջ մասնաճիւղը պարտաւոր է վճարել իր բոլոր տուրքերը եւ ներկայացնել տարեկան հաշուեցոյց վերին Մարմնին :

17.— Մասնաճիւղը պարտաւոր է իր կազմէն արտաքսուած կամ ուրիշ պատճառով հեռացած անդամներու անուանները տեղեկագրել վերին Մարմնին :

18.— Մասնաճիւղը պարտաւոր է տեղափոխուող անդամի մը տալ պատշաճ յանձնարարական : Յանձնարարականին մէջ պէտք է յիշել թէ որքան վճարած է եւ որքան ապառիկ ունի այդ անդամը :

19.— Մասնաճիւղն է պաշտօնական կապը իր մէկ անդամին եւ Կ. Սաչային ուրիշ մարմիններու միջեւ :

20.— Մասնաճիւղ մը ,երբ իր օրինական նուազագոյն թիւը կը կորսնցնէ , լուծուած կը համարուի : Լուծուած մասնաճիւղի մը դանձը եւ դոյքը կը յանձնուին վերին Մարմնին :

ԾԱՆՕԹ . Ա .— Վերին Մարմինները կրնան լուծել կամ կախակայել իրենց ենթացող մարմինները , երբ անոնք գտնուին ապօրինի եւ հակակազմակերպական ընթացքի մէջ :

ԾԱՆՕԹ . Բ .— Կախակայուած մասնաճիւղ մը կը պահէ իր կազմն ու գոյքերը , կը գանձէ եւ կը դրկէ իր տուրքերը վերին Մարմնին , բայց կը գրկուի մասնաճիւղի անունով հրապարակային ձեռնարկներ կազմակերպելու իրաւունքէն : Կախակայուած անդամ մը նմանապէս , կը վնարէ իր տուրքը մասնաճիւղին , բայց չի կրնար մասնակցիլ անոր աշխատանքներուն ձայնի իրաւունքով :

21.— Մասնաճիւղը կ'ունենայ իր կնիքը, որ կը հայթայթուի վերին Մարմնէն :

22.— Մասնաճիւղը հաւաքարար պատասխանատու է իր դանձին եւ գոյքին համար :

### ԺՈՂՈՎՆԵՐ

Հայ Կ. Սաչը ունի հետեւեալ ժողովները.—

Ա.— Անդամական ժողով

Բ.— Շրջանային Պատգմ. ժողով

Գ.— Ընդհանուր Պատգմ. ժողով :

Վերոյիշեալ ժողովներէն կը բխին հետեւեալ մարմինները.—

Ա.— Մասնաճիւղի վարչութիւն

Բ.— Շրջանային վարչութիւն

Գ.— Կեդրոնական վարչութիւն :

### Ա. ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

23.— Մասնաճիւղի բոլոր անդամներու գումարումը կը կոչուի անդամական ժողով :

24.— Անդամական ժողովը որոշումներ կուտայ մասնաճիւղի գործերու մասին : Կ'ընտրէ վարչութիւն, զանազան յանձնախումբեր եւ պատգամաւորներ :

25.— Մասնաճիւղին անդամական ժողովները կը գումարուին առնուազն ամիսը մէկ անգամ :

26.— Ժողովը օրինական կը համարուի, երբ անդամներու մեծամասնութիւնը ներկայ է : Բանաւոր պատճառով բացակայող անդամ մը պարտաւոր է գրաւոր կամ բերանացի տեղեկացնել վարչութեան կամ ժողովին իր բացակայ ըլլալու պարագան :

27.— Առանց բանաւոր պատճառի երեք անգամ յաջորդաբար բացակայող անդամ մը կը զրկուի ձայնէ : Վեց անգամ յաջորդաբար եւ առանց բանաւոր

պատճառի բացակայող մը կը կորսնցնէ իր անդամակցութեան իրաւունքը :

28.— Անդամական ժողովներու մէջ բոլոր հարցերը կը լուծուին ձայներու պարզ մեծամասնութեամբ :

29.— Անդամական ժողովները ոչ միայն պէտք է դրաղին ընթացիկ գործերու կարգադրութեամբ, այլ անոնք պէտք է ծառայեն նաեւ անդամներու մտաւոր զարգացման, յատկացնելով որոշ ժամանակ ընթերցանութեան, դրոյցներու, վիճարանութեանց եւ այլն :

30.— Բացի անդամական ժողովներէն, մասնաճիւղը կ'ունենայ պարբերաբար հրապարակային ժողովներ, հաւաքոյթներ եւ այլ ձեռնարկներ :

31.— Մասնաճիւղի մը անդամական ժողովին ներկայ կրնայ գտնուիլ ուրիշ մասնաճիւղի անդամ մը իրրեւ հիւր, եթէ ժողովը արտօնէ :

#### Բ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎ,

32.— Շրջանային Պատգմ. ժողովները շրջաններու գերագոյն մարմիններն են, որոնք կը գումարուին Շրջ. Վարչութիւններու հրաւերով, Ընդհ. Պատգմ. ժողովէն մէկ-երկու ամիս առաջ, նայելով տեղի հեռաւորութեան :

33.— Իւրաքանչիւր շրջանի Պատգմ. ժողով իր շրջանի օրէնսդրական, դատական եւ վարչական վերին մարմինն է, որ կ'առաջնորդուի Հայ Կ. Խաչի ընդհանուր ծրագրով եւ Կեդր. Վարչութեան հրահանգներով :

ԾԱՆՕԹ.— Անհրաժեշտ պարագաներու տակ կրնայ գումարուիլ արտակարգ Շրջ. Պատգմ. ժողով, Շրջ. Վարչութեան կամ Կեդր. Վարչութեան

հրաւերով եւ կամ շրջանի մասնաճիւղերու կէսէն  
աւելիի պահանջով :

34.— Երջ. Պատգմ. Ժողովը կը բաղկանայ  
Կեդր. Վարչութեան, Երջ. Վարչութեան եւ շրջանի  
մասնաճիւղերու պատգամաւորներէն :

35.— Կեդր. Վարչութիւնը եւ Երջ. Վարչու-  
թիւնը կը մասնակցին Ժողովին մէկական ձայնով .  
իսկ մասնաճիւղերը իրենց թիւին համեմատ, համա-  
ձայն իւրաքանչիւր շրջանի Ներքին Կանոնադրի  
տրամադրութեանց :

36.— Երջ. Ժողովին կրնան մասնակցիլ, մէկա-  
կան ներկայացուցիչներով, այն կըթական եւ մշա-  
կութային միութիւնները, որոնք իբրեւ անջատ մի-  
ութիւն կապուած են Հայ Կ. Սաչի հետ Փետերաթիւ  
կապերով, եւ այն կաղմակերպութիւնները, որոնք  
յենարան են Հայ Կ. Սաչի դարգացման ու բարդա-  
ւածման եւ այս մասին համաձայնութիւն ունին Կ.  
Սաչի Կեդր. Վարչութեան հետ :

#### ԵՐՋ. ԺՈՂՈՎԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

37.— Երջ. Պատգմ. Ժողովը ա) կը քննէ Երջ.  
Վարչութեան եւ մասնաճիւղերու տարուան մը նիւ-  
թական եւ բարոյական դործունէութիւնը . բ) կը  
մշակէ յաջորդ տարուան դործունէութեան ծը-  
րագիրը . գ) կը սահմանէ յաջորդ տարուան  
նախահաշիւը համաձայն Ժողովի որոշումներուն .  
դ) կը քննէ եւ կը լուծէ իր շրջանին մէջ ծագած վե-  
ճերը . ե) կը մշակէ կամ փոփոխութեան կ'ենթարկէ  
իր շրջանի Ներքին Կանոնադիրը . զ) կ'ընտրէ Երջ.  
Վարչութիւն եւ պատգամաւորներ Հայ Կ. Սաչի  
Ընդհ. Ժողովի համար :

38.— Երջանային Վարչութիւններու եւ Կեդր.  
Վարչութեան պիւտճէներուն վերաբերող ոեւէ նոր

առաջարկ չի կրնար ուղղակի դալ Շրջանային կամ  
Ընդհ. Պատգմ. Ժողովներուն: Նոր յատկացումնե-  
րու առաջարկները նախ պէտք է ներկայացուին Շրջ.  
Վարչութիւններու կամ Կեդր. Վարչութեան քննու-  
թեան, որմէ յետոյ Շրջ. կամ Ընդհ. Պատգմ. Ժո-  
ղովներու Պիւտճէի Յանձնախումբերու կողմէ կը  
բերուին Շրջ. կամ Ընդհ. Պատգմ. Ժողովներուն:

#### Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

39.— Հայ Կ. Խաչի Ընդհ. Ժողովը, օրէնսդրա-  
կան, դատական, վարչական եւ ներկայացուցչական  
գերադոյն մարմինն է, որ կը գումարուի տարին մէկ  
անգամ:

40.— Ընդհ. Ժողովի որոշումները պարտադիր  
են Հայ Կ. Խաչի բոլոր մարմիններու, մասնաճիւղե-  
րու եւ անդամներու համար:

41.— Արտակարգ Ընդհ. Պատգմ. Ժողով կը  
գումարուի, երբ Ա. Կեդր. Վարչութիւնը ստիպո-  
ղական գործի մը համար կազմակերպութեան բոլոր  
մարմիններու խորհրդակցութիւնը եւ հաւաքական  
տնօրինութիւնը անհրաժեշտ գտնէ. Բ. երբ Շրջ.  
Վարչութիւններու կամ մասնաճիւղերու կէսէն աւել-  
ին Արտակարգ Ժողով պահանջէ Գ. երբ Կեդր.  
Վարչութիւնը կազմալուծուի:

ԾԱՆՕԹ.— Այս տրամադրութիւնները կը վե-  
րաբերին նաեւ Շրջանային Պատգմ. Ժողովներու:

42.— Ընդհ. Ժողովի պարտականութիւններն  
են.—

Ա.— Ընդհ. Ժողովը կը քննէ Հայ Կ. Խաչի  
Կեդր. Վարչութեան տարուան մը նիւթական եւ բա-  
րոյական գործունէութիւնը:

Բ.— Կը պատրաստէ յառաջիկայ տարուան նա-  
խահաշիւը:

Գ.— Կը մշակէ նոր ծրագիր, նոր տարեշրջանի գործունէութեան համար:

Դ.— Կը քննէ եւ կը լուծէ մասնաճիւղերու կամ շրջաններու մէջ ծագած վէճերը:

Ե.— Կը մշակէ կամ փոփոխութեան կ'ենթարկէ Հայ Կ. Խաչի Կանոնագիրը:

Զ.— Կ'ընտրէ Հայ Կ. Խաչի Կեդր. Վարչութիւնը:

43.— Ընդհ. Ժողովը օրինաւոր կը համարուի, երբ ներկայ են իրաւասու շրջաններու պատգամաւորներու երկու երրորդը:

44.— Ընդհ. Ժողովը ծրագրային եւ կանոնագրային հարցերը միայն կը վճռէ ձայներու երկու երրորդով:

45.— Ընդհ. Ժողովը կ'ունենայ այլեւայլ յանձնախումբեր, ըստ հարկին, իրաւասութեան, օրակարգի եւ բանաձեւի, յարաբերական թղթեր քննող, հաշուեքննիչ եւ դատական: Յանձնախումբերու ընտրութեան ձեւը Պատգմ. Ժողովը կ'որոշէ:

46.— Ընդհ. Ժողովը Կեդր. Վարչութիւնը կ'ընտրէ եռասպատիկ ցանկի մը վրայէն, դադանի քուէով եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

47.— Քուէարկութենէն առաջ իւրաքանչիւր թեկնածուի մասին խորհրդակցութիւն կը կատարուի կամ կարծիք կը յայտնուի անոր բացակայութեան:

### ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

48.— Ընդհ. Ժողովին կը մասնակցին Կեդր. Վարչութիւնը, Շրջ. Վարչութիւնները եւ Կեդր. Վարչութեան դանուած երկրի բոլոր մասնաճիւղերը:

49.— Կեդր. Վարչութիւնը կը մասնակցի Ժողովին մէկ ձայնի իրաւունքով: Կեդր. Վարչութեան մնացեալ անդամները կը մասնակցին խորհրդակցական ձայնով:

50.— Շրջանային Վարչութիւնները կը մասնակցին Ընդհ. Ժողովին երկու ձայնի իրաւունքով:

ԾԱՆՕԹ.— (Մէկ ձայնը շրջանի կողմէն, միւսը Շրջ. Վարչութեան):

51.— Ընդհ. Ժողովը կրնայ հրաւիրել ընկեր-ընկերուհիներ դուրսէն, խորհրդակցական ձայնով, պայմանաւ որ հրաւիրեալներու թիւը պատգամաւորներու թիւին մէկ վեցերորդէն աւելի չըլլայ:

52.— Ամէն մասնաճիւղ կը մասնակցի Ընդհ. Ժողովին իր իրաւասու անդամներու թիւին համաձայն: Օրինական թիւի վրայ իւրաքանչիւր 50 անդամի համար մէկ ձայնի յաւելում կ'ունենայ մասնաճիւղը: Այսպէս, 5 անդամ ունեցողը՝ մէկ պատգամաւոր, 51-100 անդամ ունեցողը՝ 2 պատգամ. 101-150 անդամ ունեցողը՝ 3 պատգամաւոր, եւն.:

53.— Իրաւասու են այն մասնաճիւղերը, որոնք վճարած են իրենց համար սահմանուած սակը ամբողջութեամբ կամ երեք չորրորդով եւ մնացած մէկ չորրորդին համար ալ կուտան բաւարար բացատրութիւն Ընդհ. Ժողովին:

54.— Պատգամաւորները կ'ընտրուին մասնաճիւղերու անդամական ժողովներուն մէջ, եռապատիկ ցանկի վրայէն, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

55.— Պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն այն անդամները, որոնք առնուազն մէկ տարի իրաւասու անդամ եղած են եւ առնուազն վեց ամիս գանուած են միեւնոյն մասնաճիւղին մէջ:

56.— Պատգամաւորի ճանապարհածախքը կը հողայ մասնաճիւղը: Հեռաւոր այն մասնաճիւղերը, որոնք ըստ իրենց անդամներու թիւին, մէկէ աւելի պատգամաւոր զրկելու իրաւասութիւն ունին, կը զրկեն, սոյսմանաւ որ ծախքը 50 տոլարէն աւելի չըլլայ. հակառակ պարագային տեղին վրայ կ'ընեն բացառիկ կարգադրութիւն:

57.— Հեռաւոր մասնաճիւղերը կրնան Ընդհ. Ժողովին ներկայացուցիչ նշանակել Ժողովը գումարուած մօտիկ վայրերէ, եթէ ունէ պատճառով իրենք չեն կրնար պատգամաւոր զրկել:

58.— Եթէ նշանակուած պատգամաւորը ուրիշ տեղէ մը արդէն ընտրուած է, չի կրնար կրկին ընտրելի ըլլալ եւ Պատգմ. Ժողովը այդ ձայնը կուտայ ուրիշի մը:

59.— Այն նորակազմ մասնաճիւղերը, որոնք վաւերացուած չեն Ընդհ. Ժողովէն գէթ երեք ամիս առաջ, Ժողովին կրնան մասնակցիլ խորհրդակցական ձայնով միայն:

60.— Պատգամաւոր մը կրնայ երկու ձայն ունենալ եւ երկու մասնաճիւղ կամ երկու մարմին ներկայացնել:

61.— Ընդհ. Պատգմ. Ժողովի մօտիկ վայրերու մասնաճիւղերը չեն կրնար ձայն զրկել, այլ պէտք է մասնակցին Ժողովին իրենց պատգամաւորով:

62.— Մէկական ձայնի իրաւունքով կրնան մասնակցիլ նաեւ այն կրթական ու մշակութային միութեանց վարչութիւններու ներկայացուցիչները, որոնք, ունենալով հանդերձ իրենց Մրադիր-Կանոնագիրը, Փետերաթիւ կապերով կապուած են Հայ Կ. Սաչի հետ, եւ այն կազմակերպութիւններն ու միութիւնները, որոնք թէեւ չեն կապուած Փետե-



րաթիւ կերպով, բայց յենարան են Հ. Կ. Խաչի  
ղարդացման եւ առանձին համաձայնութիւնն ոնին  
Կեդր. Վարչութեան հետ:

63.— Ընդհ. Պատգմ. Ժողովը կ'ունենայ իր  
Ներքին Կանոնադիրը:

64.— Ընդհ. Ժողովը փակուած կը համարուի  
միայն այն ատեն, երբ օրակարգի հարցերը քննուած  
եւ լուծուած են, եւ Ժողովի ատենադրութիւնները,  
բանաձեւերը եւ որոշումները վերջնական խմբագր-  
ութեամբ վաւերացուած են Ժողովին կողմէ:

#### Ա. ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ

65.— Ամէն մասնաճիւղ կ'ունենայ իր վարչու-  
թիւնը 3, 5 կամ 7 անդամներով, նայելով մասնա-  
ճիւղի անդամներու թիւին եւ դործի քանակին: Այս  
թիւը կ'որոշէ Ժողովը՝ ընտրութենէն առաջ:

66.— Վարչութիւնը կ'ընտրուի օրինական ան-  
դամական Ժողովին մէջ, դադանի քուէարկութեամբ,  
ձայներու պարզ մեծամասնութեամբ եւ մէկ տար-  
ուան համար: Վարչութեան ընտրութիւնը պէտք է  
կատարուի իւրաքանչիւր շրջանի տարեկան Պատգմ.  
Ժողովէն անմիջապէս ետքը: Ընտրութեան արդիւն-  
քը կը տեղեկագրուի Վերին Մարմնին:

ԾԱՆՕԹ.— Ընտրութեան մասին պէտք է կան-  
խաւ լուր տրուած ըլլայ բոլոր անդամներուն:

67.— Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր դիւանը՝ 3  
անդամներով՝ ատենապետ, ատենադպիր եւ դան-  
ձապահ: Վարչութիւնը հաւաքաբար պատասխանա-  
տու է իր անդամներու դործունէութեան:

68.— Վարչութեան անդամ ընտրուելու համար  
իրաւասու կը նկատուին միայն այն անդամները,  
որոնք կը լրացնեն հետեւեալ պայմանները.—

1.— Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ մէ-

կը որ գէթ մէկ տարի անընդհատ անդամ եղած է Հայ Կ. Սաչին եւ վեց ամիս տեղական մասնաճիւղին. (բացառութիւն կը կազմեն նորակազմ մասնաճիւղերը) :

2.— Ամբաստանութեան տակ չի դտնուիր :

3.— Անդամական ժողովներուն ներկայ եղած է կանոնաւորապէս. (բանաւոր պատճառները յարգելով) :

4.— Կազմակերպական տուրքը վճարած է ամբողջութեամբ :

ԾԱՆՕԹ.— Իրաւասու անդամներ միայն կրնան պաշտօնի կոչուիլ.— վարչութեան անդամ, պատգամաւոր, դատաւոր եւ վերին Մարմիններու անդամ :

69.— Վարչութեան անդամները վերընտրելի են :

70.— Վերին Մարմնի անդամ մը չի կրնար ըլլալ նաեւ մասնաճիւղի վարչութեան անդամ կամ պատգամաւոր :

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

71.— Մասնաճիւղի վարչութեան պարտականութիւններն են.—

1.— Իրադրծել մասնաճիւղի անդամական ժողովներու որոշումները :

2.— Պատրաստել անդամական ժողովներու օրակարգը :

3.— Հոգ տանիլ ժողովներու կանոնաւորութեան եւ կարգապահութեան :

4.— Պատրաստել դործունէութեան տարեկան նախագիծը եւ ներկայացնել մասնաճիւղին :

5.— Մասնաճիւղը ներկայացնել տեղւոյն ազգային, հանրային եւ օտար հաստատութիւններու առջեւ :

6.— Պատրաստել եւ ներկայացնել մասնաճիւղի տարեկան նիւթական եւ բարոյական դործունէութեան դրաւոր տեղեկագիր Պատգամ . Ժողովին :

72.— Վարչական մարմինը կը ստանայ մասնաճիւղի անունով եկած բոլոր նամակները , կը ներկայացնէ մասնաճիւղի ժողովին եւ կը վարէ ընթացիկ դործերը մասնաճիւղի որոշումներուն համաձայն :

73.— Վարչութիւնը ընթացք կուտայ անմիջական կարգադրութիւն պահանջող պարզ խնդիրներուն եւ կը ղեկուցանէ այդ մասին յաջորդ անդամական ժողովին :

74.— Ստիպողական պարագաներու մէջ միայն , երբ հնարաւոր չէ անդամական ժողով դումարել , վարչութիւնը կրնայ տնօրինութիւն մը ընել եւ ներկայացնել յաջորդ անդամական ժողովին վաւերացրնելու համար :

75.— Եթէ վարչական մարմինը դտնուի անհող , թոյլ եւ պարտազանց եւ այդ պարտան հաստատուի , մասնաճիւղը կրնայ լուծել զայն մեծամասնութեան քուէով պաշտօնավարութեան շրջանի լրացումէն առաջ եւ նոր մը ընտրել :

76.— Ատենապետի պարտականութիւններն են .—

Ա.— Ատենապետը Դիւանի անդամներուն հետ խորհրդակցարար կ'որոշէ ժողովի օրերը , կը հսկէ ժողովի կարգապահութեանը եւ ատենադպիրին հետ կը կազմէ ժողովներու օրակարգը :

Բ.— Հետամուտ կ'ըլլայ մասնաճիւղի որոշումներուն ճիշդ եւ արագ դործադրութեանը :

Գ.— Կը ստորագրէ եւ կը կնքէ մասնաճիւղի պաշտօնական թուղթերը :



56452 855

597

A 16462

Գ. — Կը պահէ մասնաճիւղի կնիքը :

77. — Ատենադպիրի պարտականութիւններն են . —

Ա. — Ատենադպիրը կը կազմէ վարչական եւ անդամական ժողովներու ատենադրութիւնները եւ ատենապետի հաւանութեան ենթարկելէ յետոյ կր ներկայացնէ ժողովին :

Բ. — Կը դրէ մասնաճիւղի եւ վարչութեան անունով բոլոր նամակները եւ կը ստորագրէ զանոնք ատենապետին հետ :

Գ. — Կ'ունենայ առնուադն երկու տոմար . առաջինին մէջ կ'արձանագրէ մասնաճիւղի ժողովներու ատենադրութիւնը , երկրորդին մէջ՝ մասնաճիւղի անդամներու անուանացանկը եւ հասցէները : Այս վերջին տոմարին մէջ կ'արձանագրուին նաեւ ծանօթութիւններ անդամներու մասին (մահ , հեռացում , արտաքսում , տեղափոխութիւն եւայլն) :

Դ. — Կը դրէ հրաւիրագրեր անդամական ժողովներու համար եւ կը պահէ բոլոր թուղթերը :

ԾԱՆՕԹ. — Մասնաճիւղին ուղղուած ամէն պաշտօնական գրութիւն ժողովին ներկայացնելէ ետք պահ կը դրուի ատենադպրին քով :

78. — Գանձապահի պարտականութիւններն են . —

Ա. — Գանձապահը կը ստանայ եւ կը պահէ մասնաճիւղի անունով դրկուած եւ դանձուած բոլոր գումարները :

Բ. — Ամէն 3 ամիսն անգամ մը ելեւմուտքի մանրամասն հաշիւը կը ներկայացնէ մասնաճիւղի ժողովին :

Գ. — Կը կատարէ մասնաճիւղի կամ վարչութեան որոշած ծախքերն ու դրամական առաքումները :

Դ. — Ատենապետին եւ ատենադպիրին հետ կը ստորագրէ այն դրութիւնները, որոնք հաշիւներու կը վերաբերին :

Մասնաճիւղի թղթակցութիւնները կը կատարուին պաշտօնական քուղթի վրայ, որ կը հայթայթուի վերին Մարմնէն, եւ կը ստորագրուին ատենապետին եւ ատենադպիրին կողմէ :

ԾԱՆՕԹ. — Հասարակ քուղթի վրայ եւ անպաշտօն գրութիւնները անվաւեր կը նկատուին :

79. — Մասնաճիւղի ստացած բոլոր նամակները, չգործածուած անդամատետրերը եւ դրոշմները, ամէն տարեշրջանի վերջը, Պատգամ. Ժողովի գումարումէն ամիս մը առաջ կը ղրկուին վերին Մարմնին :

#### Բ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

80. — Հայ Կ. Խաչը իր ընդհանուր վերին Մարմնէն դատ, որ կը կոչուի Հայ Կ. Խաչի Կեդր. Վարչութիւն, կ'ունենայ նաեւ Շրջանային Վարչութիւններ, որոնք կ'ընտրուին Շրջանային Պատգամ. Ժողովներէն :

81. — Շրջ. Վարչութիւնը կապ կը պահէ այն մշակութային միութեանց եւ կազմակերպութեանց հետ, որոնք որոշ կապերով կապուած են Հ. Կ. Խաչին եւ կամ աջակից են անոր, եւ որոնք պիտի աշխատին փոխադարձաբար օժանդակել իրարու եւ չխաչաձեւել զիրար իրենց ձեռնարկներով :

82. — Շրջ. Վարչութիւնները վերին գործադիր մարմիններն են իրենց շրջաններուն մէջ եւ կը վարեն դործերը ըստ տեղական կանոնադրի եւ համաձայն Ընդհ. կանոնադրի ցուցմունքներուն :

83. — Շրջ. Վարչութիւնները կ'ընտրուին 5-7 անդամներով, համաձայն շրջանի Պատգամ. Ժողովի

որոշումին, մէկ տարուան համար եւ ձայներու սլարդ մեծամասնութեամբ:

84.— Երջ. Վարչութեան անդամները վերընտրելի են:

85.— Երջ. Վարչութեան անդամ կրնան ընտրուիլ անոնք, որ երեք տարի անընդհատ գտնուած են Հ. Կ. Խաչի կազմին, իսկ մէկ տարի նոյն վայրին մէջ:

86.— Երջ. Վարչութիւնները սերտ կապ կը պահեն Հայ Կ. Խաչի Կեդր. Վարչութեան հետ, կը ջանան դործադրել Ընդհանուր եւ Երջանային Պատգմ. Ժողովներու որոշումները եւ կը հսկեն մասնաճիւղերու դործունէութեանց վրայ:

87.— Երջաններու բոլոր արտաքին յարաբերութիւնները կը կատարուին Երջ. Վարչութիւններու միջոցաւ:

88.— Երջանային Վարչութիւնները կ'ունենան իրենց կնիքը, զոր կը հայթայթէ Հայ Կ. Խաչի Կեդր. Վարչութիւնը:

89.— Երջ. Վարչութիւնները Հ. Կ. Խաչի Կեդր. Վարչութեան հանդէպ ունին հետեւեալ պարտաւորութիւնները.—

Ա.— Երջ. Վարչութիւնները պարտաւոր են ուղարկել իրենց շրջանի կազմակերպական եկամուտի որոշ տոկոսը (25 առ հարիւր) ընդհանուր դործերու համար:

Բ.— Երեք ամիսն անդամ մը Հայ Կ. Խաչի Կեդր. Վարչութեան պէտք է ներկայացնեն մանրամասն տեղեկագիր իրենց եւ շրջանի նիւթական եւ բարոյական դործունէութեան մասին:

Գ.— Ընդհ. Ժողովէն առնուազն երկու ամիս առաջ պէտք է պատրաստեն եւ ղրկեն Կեդր. Վարչութեան իրենց տարեկան ընդհ. տեղեկագիրը,

հաշուեկշիռը եւ Ընդհ. Ժողովին ներկայացնելիք  
հարցերը :

Դ.— Երջանային վարչութիւնները պարտաւոր  
են ստանալ Հայ Կ. Խաչի Կեդր. վարչութեան հա-  
մաձայնութիւնը բոլոր այն ձեռնարկներուն համար,  
որոնք նիւթական պատասխանատուութիւն կը պա-  
հանջեն եւ նախատեսուած չեն Ընդհ. կամ Երջանա-  
յին Պատգմ. Ժողովներով :

90.— Երջանային վարչութիւններն ըլլալով ի-  
րենց շրջաններու վերին մարմինները, անոնց ըրած  
կարգադրութիւններն ու հրահանգները պարտաւոր-  
իչ են մասնաճիւղերուն եւ անդամներուն :

91.— Երջաններու մասնաճիւղերուն մէջ ծա-  
գած ունէ խնդիր կը լուծէ Երջ. վարչութիւնը օրի-  
նական ճամբով, համաձայն Ներքին Կանոնադրի  
ցուցմունքներուն :

92.— Երջանային վարչութեան կազմին մէջ  
ծագած ունէ խնդիր կամ դժուարութիւն կը քննէ  
Հայ Կ. Խաչի Կեդր. վարչութիւնը եւ անոր կար-  
գադրութիւնը վերջնական է ու պարտաւորիչ :

93.— Երջանային վարչութիւնը լուծուած կը-  
համարուի, երբ անդամներու թիւը կէսէն պակաս  
ըլլայ : Այդ պարագային Կեդր. վարչութիւնը կը  
նշանակէ առժամեայ մարմին մը, որ դումարէ ար-  
տակարգ Պատգմ. Ժողով եւ կամ վարէ գործերը  
մինչեւ տարեդիուի՝ ըստ Կեդր. վարչութեան ցուց-  
մունքներուն :

94.— Երջան մը լուծուած կը համարուի, երբ  
մասնաճիւղերու թիւը կը հասնի 3-ի եւ րնդհ. ան-  
դամներու թիւը 20-ի :

95.— Երջանի մը լուծման պարագային, կազ-  
մակերպութեան պատկանած դրամ, գոյք եւ ամէն  
ինչ կը ղրկուի Հայ Կ. Խաչի Կեդր. վարչութեան :

Գ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

96.— Հայ Կ. Սաչի բոլոր շրջաններն ու մարմինները կապուած են մէկ ընդհանուր կեդրոնի, որ կը ներկայացնէ կաղմակերպութեան վերին գործադիր իշխանութիւնը եւ կը կոչուի Հայ Կ. Սաչի Կեդր. Վարչութիւն:

97.— Կեդր. Վարչութիւնը սլարտականութիւն ունի կրթական, մշակութային եւ այլ միութեանց հետ յարաբերութիւն մշակելու եւ ֆետերաթիւ կապերով կապուելու այդ միութեանց եւ այն կաղմակերպութեանց հետ, որոնք աջակից են Հ. Կ. Սաչին եւ համակիր՝ անոր հետապնդած նպատակներուն: Նման կաղմակերպութեանց հետ գործակցութեան ձեւերը Կեդր. Վարչութիւնը ինք կ'որոշէ:

ԾԱՆՕԹ.— Յօդ. 3-ի Թ. եւ Ժ. կէտերը, ինչպէս նաեւ 36-րդ, 62-րդ, 81-րդ, 96-րդ յօդուածները կը վերաբերին միայն եւ բացառաբար Շրջանային եւ Պատգմ. Ժողովներուն եւ անոնցմէ բխած Շրջանային եւ Կեդր. Վարչութեանց:

98.— Կեդր. Վարչութիւնն է ընդհանուր Հ. Կ. Սաչի պաշտօնական ներկայացուցիչը ամէն տեղ, Հ. Կ. Սաչի մարմիններու, ինչպէս նաեւ հայ եւ օտար կաղմակերպութիւններու առջեւ:

99.— Կեդր. Վարչութիւնը կ'ընտրուի Ընդհ. Պատգմ. Ժողովէն դադանի քուէարկութեամբ, ձայներու սարդ մեծամասնութեամբ եւ մէկ տարուան պաշտօնավարութեան համար:

100.— Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ 7 հոգիէ եւ վերընտրելի է:

101.— Կեդր. Վարչութեան ընտրելի կրնան համարուիլ միայն այն անդամները, որոնք ընտրութեան օրէն առաջ առնուազն հինգ տարի շարունակ եղած են Հ. Կ. Սաչի անդամ եւ մէկ տարի գտնուած են նոյն շրջանը:



102.— Կեդր. Վարչութեան ընտրելի չի կրնար  
ըլլալ՝

Ա.— Այն անդամը, որ կը դառնուի կազմակերպական ամբաստանութեան տակ:

Բ.— Արտաքսուած եւ վերստին ընդունուած անդամ մը, եթէ միայն ձեռնհաս ատեանի մը կողմէ իսպառ անպարտ յայտարարուած չըլլայ:

103.— Կեդր. Վարչութեան պարտականութիւններն են.—

Ա.— Կեդր. Վարչութիւնը կը գործադրէ Ընդհ. Ժողովի որոշումները եւ կը հսկէ Շրջանային Վարչութիւններու եւ մասնաճիւղերու ընդհ. գործունէութեան:

Բ.— Կը կազմէ նոր շրջաններ եւ մասնաճիւղեր:

Գ.— Կ'աշխատի բարձրացնել Հ. Կ. Խաչի հասոյթները եւ անդամներու թիւը:

Դ.— Շրջաբերականներով պարբերաբար տեղեկութիւններ կուտայ Շրջ. Վարչութիւններուն եւ Ամերիկայի մասնաճիւղերուն իր գործունէութեան մասին:

Ե.— Սերտ յարաբերութիւն կը պահէ Շրջ. Վարչութիւններու եւ մասնաճիւղերու հետ եւ թելադրութիւններով ու հրահանգներով մղում կուտայ անոնց գործունէութեան:

Զ.— Շրջ. Վարչութիւններէն ու Ամերիկայի մասնաճիւղերէն պարբերաբար կը պահանջէ նիւթական ու բարոյական հաշուետուութիւն եւ կը ներկայացնէ դանոնք բոլոր շրջաններուն շրջաբերականներով կամ մամուլով:

Է.— Մղում կուտայ հայ կնոջ մտաւոր դարդացման:

Ը.— Կը քննէ բոլոր ենթակայ մարմիններու

հաշիւները ամէն տարեւեք ընդ եւ կը ներկայացնէ  
դանոնք Ընդհ. Ժողովին :

Թ. — Կը պատրաստէ Ընդհ. Ժողովի օրակարգը  
եւ կը ներկայացնէ դայն բոլոր շրջաններուն եւ մաս-  
նաճիւղերուն Ընդհ. Ժողովէն առնուազն երկու ա-  
միս առաջ :

Ժ. — Կ'որոշէ եւ կը հաղորդէ Ընդհ. Ժողովի  
վայրն ու թուականը Ժողովի դումարումէն առնը-  
ւազն երկու ամիս առաջ :

ԺԱ. — Կը պահանջէ կազմակերպական տուր-  
քերու հաշւոյն ապառիկ ունեցող շրջաններէն ու  
մասնաճիւղերէն փութացնել եւ փակել իրենց հա-  
շիւները Ընդհ. Ժողովէն առնուազն մէկ ամիս ա-  
ռաջ :

ԺԲ. — Կեդր. վարչութիւնը պարտաւոր է իր  
հաշիւները, տարեկան ընդհ. տեղեկագիրը եւ յա-  
րաբերական բոլոր թղթերը պատրաստել եւ դնել  
Ընդհ. Ժողովի տրամադրութեան տակ :

ԾԱՆՕԹ. — Հայ Կ. Խաչի Կեդր. վարչութիւնը  
իր գտնուած վայրին մէջ կը ստանձնէ նաեւ Շրջա-  
նային վարչութեան պարտականութիւններ :

104. — Կեդր. վարչութիւնը կը բաշխէ կազմա-  
կերպական եկամուտները համաձայն Ընդհ. Ժողո-  
վի հաստատած նախահաշուին :

105. — Կեդր. վարչութիւնը կազմակերպական  
ոեւէ կարեւոր խնդրի առթիւ խորհրդակցութեան  
կրնայ հրաւիրել ձեռնհաս ընկեր-ընկերուհիներ :

106. — Կեդր. վարչութիւնը չի կրնար փոխ դը-  
րամ տալ ոեւէ մարմնի կամ անհատի :

107. — Կեդր. վարչութիւնը կ'ունենայ անձե-  
ռընմխելի դումար մը իբրեւ հիմնադրամ : Հիմնա-  
դրամը կը գոյանայ ընդհ. եկամուտի հինգ տոկո-

սէն : Սոյն դումարը կրնայ գործածուիլ միայն  
Ընդհ. Ժողովի որոշումով :

108.— Երբ կեդր. Վարչութեան մէկ կամ աւելի  
անդամները պակսին, անոնց տեղ կը հրաւիրուին  
Ընդհ. Ժողովէն նշանակուած փոխ անդամները :  
Իսկ երբ անդամներու թիւին կէսէն աւելին պակսի,  
մնացած անդամները կը հրաւիրեն արտակարգ  
Ընդհ. Ժողով նոր ընտրութեան համար :

ԿԵԴՐ. ՎԱՐՇՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

109.— Կեդր. Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր  
դիւանը, որ կը բաղկանայ ատենապետէ, քարտու-  
ղարէ եւ դանձապահէ :

110.— Կեդր. Վարչութիւնը կ'ունենայ վճարո-  
վի քարտուղար, մնալով Ընդհ. Ժողովի որոշած  
նախահաշուի սահմաններուն մէջ :

111.— Կեդր. Վարչութիւնը ինքն իր կազմէն  
կ'ընտրէ իր քարտուղարը : Կազմին մէջ յարմար  
քարտուղար չգտնուելու պարագային միայն դուր-  
սէն կը հրաւիրէ Կ. Սաչին անդամակցող մէկը, ա-  
ռանց, սակայն, ձայնի իրաւունքի :

112.— Ատենապետին պարտականութիւններն  
են .—

Ա.— Ատենապետել Կեդր. Վարչութեան նիստե-  
րուն .

Բ.— Նախապէս ուսումնասիրել Կեդր. Վար-  
չութեան անունով ստացուած բոլոր գրութիւնները  
եւ անոնց հիման վրայ քարտուղարին հետ խորհըր-  
դակցարար պատրաստել նիստերու օրակարգը :

Գ.— Հսկել որ Կեդր. Վարչութեան որոշումնե-  
րը գործադրուին անյապաղ եւ անթերի :

Դ.— Ստորագրել եւ կնքել քարտուղարին եւ ի  
հարկին դանձապահին հետ պաշտօնական բոլոր  
թուղթերը :

Ե. — Գանձապահին հետ ստորագրել չէքերը :

113. — Քարտուղարին սլարտականութիւններն են . —

Ա. Կաղմել Կեդր . Վարչութեան նիստերու ատենագրութիւնները . ստորագրել եւ կնքել բոլոր պաշտօնական գրութիւնները ատենապետին եւ ի հարկին նաեւ գանձապահին հետ :

Բ. — Պատրաստել Կեդր . Վարչութեան բոլոր գրութիւնները — շրջաբերական , նամակ , տեղեկագիր եւայլն , եւ գործադրել նիստերու որոշումները :

Գ. — Ստանալ Կեդր . Վարչութեան անունով բոլոր գրութիւնները , սլատրաստել նիստերու օրակարգը ատենապետին հետ եւ ներկայացնել դանօնք Կեդր . Վարչութեան նիստին :

Դ. — Պատրաստել Ընդհ . Ժողովին ներկայացրնելիք տարեկան մանրամասն տեղեկագիրը — բարոյական եւ հաշուական :

Ե. — Գանձապահին հետ ստանալ Կեդր . Վարչութեան անունով եկած դումարները , արձանագրել դանօնք տոմարներուն մէջ եւ դրկել համապատասխան ընկալագիր :

Զ. — Պահել սերտ թղթակցութիւն Շրջ . Վարչութիւններու եւ մասնաճիւղերու հետ եւ հետամուտ ըլլալ որ անօնք ճշդութեամբ կատարեն Կեդր . Վարչութեան բոլոր հրահանգներն ու թեյադրութիւնները :

Է. — Պահանջել շրջաններէն տարեկան մանրամասն նիւթական հաշիւ եւ անկէ կաղմել Հ . Կ . Խաչի ընդհ . հաշուեկշիռը , ներկայացնելու Ընդհ . Ժողովին :

Ը. — Խնամով պահել կատարուած ծախքերուն եւ վճարումներուն ընկալագրերն ու արդարացուցիչ վաւերաթղթերը :

Թ. — Կաղմել եւ պահել Շրջ. Վարչութիւններու, մասնաճիւղերու եւ անդամներու ընդհ. ցանկը. նշանակել մահերը, տեղափոխումները, հեռացողները եւ արտաքսուածները:

Ժ. — Կաղմել եւ պահել Կեդր. Վարչութեան բոլոր դոյքերու ցուցակը:

114. — Գանձապահին պարտականութիւններն են. —

Ա. — Քարտուղարին հետ ստանալ Կեդր. Վարչութեան անուշով եկած դումարները եւ յանձնել դրամատան:

Բ. — Քարտուղարին միջոցով դրամ յանձնել կամ դրկել Կեդր. Վարչութեան որոշումով միայն:

Գ. — Ատենապետին հետ ստորագրել բոլոր չէքերը:

Դ. — Կեդր. Վարչութեան ներկայացնել պարբերաբար դրամարկղի հաշիւները:

Ե. — Քննել Շրջ. Վարչութիւններու հաշիւները եւ անոնց մասին իր նկատողութիւնները ներկայացրնել Կեդր. Վարչութեան:

115. — Կեդր. Վարչութիւնը իր անդամներուն միջեւ բաժնած ըլլալով հանդերձ Հայ Կ. Խաչի աշխատանքները, հաւաքաբար պատասխանատու է ընդհ. Ժողովին առջեւ իր նիւթական ու բարոյական գործունէութեան համար:

116. — Կեդր. Վարչութիւնը իր գանձի ապահովութեան համար ազատ է ընել իր անհրաժեշտ սեպած կարգադրութիւնը:

Ծանօթ. — Ապահովութեան լաւագոյն միջոցն է դրամատունէն ուրիշ գումար հանել երկու հոգիի ստորագրութեամբ միայն, ինչպէս ատենապետի եւ գանձապահի. կամ երաշխաւորութեան տակ առնել գանձապահը եւ քարտուղարը:

## ԳՈՐԾԻՉՆԵՐ

117.— Գործիչ կը ճանչցուին այն ընկեր-ընկերուհիները, որոնք Հայ Կ. Սաչի Վերին Մարմիններու կողմէ կը հրաւիրուին աջակցելու Հայ Կ. Սաչի գրաւոր եւ բերանացի փրօփականտին: Գործիչները պարտաւոր են հետեւիլ Հայ Կ. Սաչի Վերին Մարմիններու հրահանգներուն:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ Անհատ անդամներ

118.— Կազմակերպութեան ամէն անդամ պարտաւոր է ենթարկուիլ մարմիններու եւ ժողովներու որոշումներուն: Անսաստողները պատասխանատու կը նկատուին:

119.— Կարգապահութեան տեսակէտով ամէն անդամ պատասխանատու է իր պատկանած մարմնին, եւ կը դատուի միայն անոր կողմէ:

120.— Մարմինները եւ ժողովները կրնան իրենց ենթակայ անդամներու մասին պատիժներ տնօրինել, բայց նախապէս պարտաւոր են պաշտպանուելու հնարաւորութիւն տալ ենթակային:

121.— Պատժական ամէն որոշում պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

122.— Մարմիններու եւ ժողովներու պատժական որոշումները վերջնական են, եթէ ենթական չյարուցանէ բողոք: Բողոքել կարելի է անմիջօրէն Վերին Մարմնին, եթէ որոշումը տուած է ստորադաս ժողով մը, եւ անմիջօրէն դերադաս ժողովին, եթէ որոշումը տուած է ստորադաս Մարմին մը:

ԾԱՆՕԹ.— Պատժական իրաւասութեան տեսակէտով ժողովները գերադաս են, քան անոնցմէ բլխած Մարմինները:

123.— Կարգապահական պատիժներու դէմ բո-

դոքել կարելի է մինչեւ երեք ամիս, սկսելով որոշումը հաղորդելու օրէն: Բողոքառու Մարմինը կամ ժողովը հարցը կրնայ վերաքննել կամ ինքը կամ յատուկ դատական ատեանի յանձնելով:

124.— Կեդր. Վարչութիւնը կրնայ հեռացման կամ արտաքսման դործերու վերաքննութիւն պարտադրել Շրջ. Վարչութիւններուն եւ Շրջ. Պատգմ. ժողովներուն, եթէ բողոքարկուն օրինական թերութիւններ է մատնանշած պատժի տնօրինութեան մէջ:

#### Մարմիններ

125.— Կ. Խաչային մարմիններու եւ ժողովներու փոքրամասնութիւնները պարտաւոր են ենթարկուիլ մեծամասնութեան որոշումներուն:

126.— Գերադաս մարմին մը կամ ժողով մը կրնայ լուծել անմիջօրէն իրեն ստորադաս մարմին մը կամ ժողով մը, եթէ անոր ընթացքը նկատէ ապօրի եւ հակակաղմակերպական:

127.— Ստորադաս մարմիններու միջեւ ծաղած կաղմակերպական վէճերը կը լուծէ անմիջօրէն գերադաս մարմինը կամ ժողովը:

128.— Պատժական որոշումներու դէմ բողոքելու պարագային, մարմինները եւ ժողովները պէտք է հետեւին անհատ անդամներու բողոքի համար սահմանուած օրէնքին:

#### Դատական

129.— Կ. Խաչի կաղմակերպութեան դէմ յանցաւոր կը նկատուի այն անդամը, որ

Ա.— Հ. Կ. Խաչի կարգապահութեան դէմ կ'անսաստէ:

Բ.— Կ. Խաչի ներքին դործերու մասին ուրիշներու կը խօսի:

Գ.— Գոհակ կամ անպատշաճ լեզու կը դործածէ ժողովներու մէջ:

Դ. — Դիտմամբ կը խանդարէ ժողովը կամ ան-  
սպասշած վարմունք կ'ունենայ :

Ե. — Կեդրոնական, Շրջ. Վարչութեանց կամ  
Պատգմ. Ժողովներու որոշումները ու տեղեկու-  
թիւնները, որ սահմանուած են մնալ այդ մարմին-  
ներու մէջ միայն, կը հաղորդէ անկէ դուրս դա՛նուող  
անդամներուն :

Զ. — Կր գրաւարտէ կամ անհիմն լուրեր կը տա-  
րածէ իր ընկերներու մասին :

Է. — Գիտակցաբար երեսի վրայ կը ձգէ կամ կը  
մերժէ կատարել իրեն յանձնուած պաշտօն մը :

Ը. — Կ. Սաչի անունը կը շահագործէ կամ ա-  
նոր պատկանող ուէ դրամ կամ ինչք կ'իւրացնէ :

130. — Այս յանցանքներուն դէմ կը սահմանուին  
հետեւեալ պատիժները. —

Ա. — Դիտողութիւն կամ նկատողութիւն :

Բ. — Յանդիմանութիւն :

Գ. — Ընտրուելու իրաւունքէ զրկում :

Դ. — Քուէազրկում :

Ե. — Կախակայում :

Զ. — Արտաքսում :

Գերադաս մարմնի մը անդամը ենթակայ չէ  
ստորադաս մարմնի մը կամ ժողովի մը պատժական  
տնօրինութեանց : Ստորադաս մարմինը կամ ժողո-  
վը կրնայ իր դիտողութիւնը կամ ամբաստանու-  
թիւնները ընել այն մարմնին, որուն անդամ է են-  
թական :

131. — Երբ Կեդր. կամ Շրջ. Վարչութիւնները  
պարտադանց ըլլան կամ ապօրինի ընթացքի մէջ  
դա՛նուին, անկէ կրնայ բացատրութիւն պահանջել  
ամէն մասնաճիւղ :

Բողոք ներկայացնելու եւ նկատի առնելու եղանակը

132. — Ամէն բողոք ուէ անդամի, անդամնե-



րու եւ կամ մարմնի դէմ գրաւոր կը ներկայացուի  
սլատկան մարմնի օրինաւոր ժողովին :

133. — Թեթեւ յանցանքներու համար ատենա-  
պետուհին ժողովի ընդհ. կարծիքը առնելէ յետոյ  
համաստասխան որոշում կը սահանջէ : Ծանր  
յանցանքներու համար կ'ընտրուի 3-5 հոգիէ բաղ-  
կացեալ դատական յանձնախումբ մը :

ՄԱՆՕԹ. — Դատական յանձնախմբին անդամ-  
ները դատին հետ ունէ՛ առնչութիւն կամ շահագրգը-  
ռութիւն սլտֆ չէ ունենան :

134. — Դատական յանձնախմբի յանձնուած դա-  
տը գրաւոր կը քննուի սլատկան մարմնի ժողովէն  
դուրս եւ արդիւնքը գրաւոր կը ներկայացուի յա-  
ջորդ ժողովին :

135. — Դատական յանձնախումբը կը լսէ երկու  
կողմերը — ամբաստանող եւ ամբաստանեալ — ինչ-  
պէս նաեւ վկաները, ապա գրաւոր կամ բերանացի  
տուեալ փաստերով ու պատճառաբանութիւններով  
ամբաստանեալին կը յայտնէ ամբաստանութեան  
կէտերը եւ հնարաւորութիւն կուտայ անոր իր  
պաշտպանողականը ներկայացնելու : Այնուհետեւ  
յանձնախումբը առանձին կը բանաձեւէ իր վճիռը :

Դատական մարմնի վճիռները կ'անցնին երկու  
երրորդի մեծամասնութեան քուէով :

136. — Ունէ՛ անդամ որ դատական յանձնախում-  
բին կողմէ կը հրաւիրուի վկայութիւն տալու, պար-  
տաւոր է ներկայանալ ստեանին եւ պատասխանել  
հարցումներուն : Հակառակ պարագային յանցա-  
ւոր կը նկատուի :

137. — Դատական մարմնի գրաւոր եզրակացու-  
թիւնը եւ արդարացման կամ պատժական առաջարկ-  
ները կը ներկայացուին սլատկան ժողովին կամ  
մարմնին, որ կրնայ հաստատել զանոնք անփոփոխ

կամ փոփոխութիւններ մտցնելով եւ կամ մերժելով՝ նոր յանձնախմբի մը վերաքննութեան ենթարկել եւ յետոյ նոյն ձեւով որոշում հանել :

138.— Օրինական ձեւով դրուած եւ դործադրութեան մէջ եղած դատավճիռը կարելի է մեղմացրնել կամ վերացնել միմիայն Պատգմ. Ժողովի որոշումով :

#### ՎԵՐԱԿԱՍՏԱՄԱՌՄ

139.— Հայ Կ. Խաչի ուսէ անդամ, որ մասնաճիւղէն հեռացուած է իր անդամատուրքը չվճարելուն պատճառով, կրնայ վերստին ընդունուիլ կանխիկ վճարելով իր պարտքը, ապա թէ ոչ կ'ընդունուի իրրեւ նոր անդամ :


140.— Դատավճիռէ խուսափելու համար հրաժարած անդամները չեն կրնար վերստին ընդունուիլ մինչեւ չենթարկուին իրենց մասին տրուած վճիռին :

ԾԱՆՕԹ.— Վերահաստատումի որոշումները ենթակայ են վերին Մարմիններու վաւերացման :

#### ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

141.— Ընդհ. Պատգմ. Ժողովը միայն կրնայ փոփոխութիւն մտցնել այս Կանոնադրին մէջ : Ուստի յօդուած փոփոխելու կամ ջնջելու, ինչպէս նաեւ նոր յաւելում ընելու ամէն առաջարկ, պատճառաբանութիւններով մէկտեղ կը ներկայացուի Կեդր. Վարչութեան՝ Ընդհ. Ժողովէն առնուազն 3 ամիս առաջ, որպէսզի Կեդր. Վարչութիւնը Ընդհ. Ժողովին ներկայացնելիք հարցերուն վրայ աւելցնելով, ներկայացնէ դանոնք Շրջանային Վարչութիւններու եւ մասնաճիւղերու քննութեան :

Առանց այս ձեւականութեան, ուղղակի Ընդհ. Ժողովին բերուած կամ հոն յարուցուած Կանոնադրային հարցերը նկատի չեն առնուիր, այլ կը յանձնուին նորընտիւր Կեդր. Վարչութեան, որ յաջորդ Ընդհ. Ժողովին ենթարկէ պատշաճ եղանակով :



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010137

С.С.М.

ЦЕНА

11  
16462